

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Սարսափելի
ժամանակ
Յիսուսի
համար



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: M. Maillot; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Երբ Յիսուս
կնքուեցաւ
Սատուած
իօսեցաւ եւ
ըսաւ. "Այս է իմ
սիրելի որդիս:
Իմով ես
երջանիկ եմ":



Աստուծոյ
Սուրբ
Յոգին
իջաւ
Յիսուսի
վրայ
աղաւնիի
նման:



Այդպէ ետք, Աստուծոյ
Սուրբ Հոգին Յիսուս
առաջնորդեց
անջրդի տեղ մը:



Յիսուս առանձին էր:



Յիսուս ծոմ պահեց քառասուն
օր: Այդ կը նշանակէ, որ որեւէ
ուտելիք չկերաւ: Ան շատ
անօթեցաւ:



Սուրբ Գիրքը կ'ըսէ,
թէ հոն ալ վայրի
գազաններ կային:



Սատանան եկաւ
փորձութեան
մատնելու
համար
Յիսուսին:



Երկար ժամանակ
առաջ ան փորձութեան
մատնած էր
Ադամին եւ
Եւային, ...



... որպեսզի Աստուծոյ
չենթարկուին Եդեմի
պարտեզին մէջ: Յիմա
Յիսուս
պիտի
փորձուի:



Սատանան
նոյնիսկ կրնայ
փորձել Աստուծոյ
որդիին՝ Յիսուսի:



"Եթէ Աստուծոյ որդին
ես", ըսաւ սատանան,
"այս քարերը հաց
դարձուր": Ան գիտեր,
որ Յիսուս անօթի էր:




Ան գիտեր, թե Աստուծոյ
տղան կրնայ քարերը
հացի վերածել: Արդեօ՞ք
Յիսուս կը հնազանդի
սատանային:




Ո՛չ: Յիսուս չհնազանդեցաւ
սատանային:



Փոխարենը ան Աստուծոյ խօսքին
պատասխանեց:



"Մարդ հացով միայն պիտի չապրի,
այլ ամեն մեկ խօսք, որ կ'ելլէ
Աստուծոյ բերանէն":



Այդպէ ետք սատանան Յիսուսը
առաջնորդէց մեծ քաղաք՝
Երուսաղէմ, սուրբ
տաճարը, ...




... ուր ժողովուրդը Աստուծոյ կը
պաշտէ: Նորէն ի՞նչ պիտի ընէր
արդէօք սատանան:




"Եթե Աստուծոյ որդին ես, վար նետե
ինքզիքդ", ըսաւ սատանան
"իր խօսքը կ'ըսէ, թէ իր
հրեշտակները պիտի
փրկեն քեզի":




"Ո՛չ" պատասխանեց Յիսուս "Նաեւ
գրուած է... Պիտի չփորձես քու տեր
Աստուածդ":







Սատանան նորէն փորձեց:
Ան Յիսուսը տարաւ քաղաքէն
դուրս լեռան գագաթը:




Յիսուսի ցոյց տուաւ
աշխարհի փառքերը եւ
թագաւորութիւնները
եւ սատանան ըսաւ.



"Ես քեզի պիտի
տամ այս ամենը եթե
գետին իյնաս եւ ինձի
պաշտես":




"Ետիս գնա՛ սատանայ"
հրամայեց Յիսուս:



"Գրուած է, պիտի պաշտես միայն
տեր Աստուածդ եւ միայն իրեն
պիտի ծառայես":



Պահ մը
սատանան
Յիսուսին
քովէն
հեռացաւ:




Այդպէ ետք
հրաշալի
բան մը
պատահեցաւ:



Աստուած իր
հրեշտակները
ղրկեց, որպէսզի
հանգստացնեն
եւ հոգ տանին
Յիսուսի իր
որդւոյն, ...



... որ
չենթարկուեցաւ
սատանային:



Սարսափելի ժամանակ Յիսուսի համար

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 4, Ղուկաս 4

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

